ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 11-ին ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին։

Ժողովը բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Սովետական բոլոր ժողովուրդների կյանքում, ասաց նա, հսկայական նշանակության իրադարձություն էր Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումը, որի փառասլանծ 60-ամյա հոբելյանը նշում է մեր ժողովուրդը։ Մեր երկրի տնտեսական և ռազմական հզորության անշեղ ամրապնդումը սովետական ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի համար, խաղաղության և ստեղծարար աշխատանքի հրաշխիք են։ Այսօր սովետական հանրապետություններից յուրաքանչյուրը օրգանական և անբաժանելի մասն է մեծ սովետական պետության, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կենսագործում է սոցիալական արդարության, բոլոր ազգերի և ազգությունների հոգևոր առաջադիմության և հավասարության լենինյան սկզբունքները։ Սովետների երկիրը առաջինը գնաց այդ ուղիով, և դա է մեր ուժը։ Ինչպես ՍՄԿԿ XXVI համագումարում նշեց ընկեր Լ. Ի. Բրեժնևը, մեր հասարակության մեջ գիտությունը հարաճուն դեր է խաղում, ուստի բնական է, որ կուսակցությունն առաջադրել է և հաջողությամբ լուծում է բոլոր միութենական հանրապետություններում մեծ գիտության կազմակերպման կարևոր խնդիրները։ Հսկայական է, նշեց պրեզիդենտը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և բոլոր սովետական գիտնականների, առանձնապես ռուս գիտնականների դերը Հայաստանի գիտության զարգացման համար, որը մեծ առաջադիմության հասավ վերջին տասնամյակներում։

Խոսելով գիտության կազմակերպման մասին, Վ. Համբարձումյանը ընդգծեց նրա հսկայական ազդեցությունը հանրապետության արդյունաբերական և գյուղատնտեսական պոտենցիալի զարգացման վրա։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը մեծ նշանակություն է տալիս ֆունդամենտալ հետազոտությունների արդյունքների գործնական կիրառությանը։ Այդ նպատակով սկսվել է և կշարունակվի ակադեմիայի ինստիտուտների շրջանակում կոնստրուկտորական բյուրոների և փորձնական արտադրությունների կազմակերպումը։ Մեր գիտնականները, նշեց նա, չկտրվելով պրակտիկայից, պարտավոր են բարձրացնել ֆունդամենտալ հետազոտությունների մակարդակը, առաջնահերթ նշանակություն տալ որակյալ կադրերի պատրաստման, նրանց ընտրության և դաստիարակության գործին։

Իր զեկուցման մեջ, որը նվիրված էր ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը խոսեց անցած վեց տասնամյակների ընթացքում սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների, հանրապետության հսկայաքայլ առաջընթացի մասին։ Այսօր, ասաց նա, հետադարձ հայացք գցելով անցած ուղու վրա, իմաստավորելով մեր հանրապետության պատմական հաջողությունները, մենք խորապես գիտակցում ենք, որ առանց ռուս ժողովրդի, մեր մեծ երկրի բոլոր ժողովուրդների անշահախնդիր օգնության մենք չէինք կարողանա այդ հաջողություններին հասնել։

Սովետական Հայաստանի նվաճումներն առանձնապես նշանակալի են արդյունաբերության զարգացման բնագավառում։ Հանրապետության ինդուստրացումը ապահովեց նրա աննախադեպ վերելքը։ Ժամանակակից Հայաստանը ինդուստրիալ հանրապետություն է, որն ունի արտադրատեխնիկական մեծ պոտենցիալ և հանդիսանում է երկրի միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի կարևոր օղակը։ Հանրապետությունն այսօր իր արտադրանքն առաքում է Սովետական Միության բոլոր տնտեսական շրջանները։

Էկոնոմիկայի և ժողովրդական կրթության զարգացման բազմաբնույթ արագ տեմպերը հնարավոր և անհրաժեշտ դարձրին Հայաստանի վերածումը մեծ գիտության Հանրապետության։ Ընդլայնած հայ ժողովրդի գիտական հարուստ ավանդույթներին, առանձնապես հասարակական գիտությունների բնագավառում, Սովետական Հայաստանում գիտության նման ծաղկում, մասնավորապես բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում, պարզապես աննկարագրելի կլիներ առանց Մոսկվայի, Լենինգրադի գիտական հիմնարկների, մեր երկրի մյուս գիտական կենտրոնների բազմակողմանի օգնության և աջակցության։

«Սովետական Ռուսաստանի դերը Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստական պլանների ձախողման գործում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։ Նորահայտ արխիվային նյութերի հրման վրա նա ցույց տվեց, թե օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում որքան ուժեղ էին Արևելյան Հայաստանի բնակչության ֆիզիկական ոչնչացման պլանները, երբ իմպերիալիստները ձգտում էին տիրել ամբողջ Անդրկովկասին և այն անջատել Սովետական Ռուսաստանից։

Ժողովը հավաստեց, որ այսօր Սովետական Հայաստանը ՍՍՀՄ կազմավորման 60-ամյա հորելյանը դիմավորում է կուսակցության հոյակապ կանխագուշակումների կենսագործման համար մղվող պայքարում արձանագրած նվաճումներով և ապագայի ուժեղ ծրագրերով։ Ժողովին ներկա էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Գ. Ն. Անդրեևը, Վ. Բ. Ղալումյանը, Հ. Մ. Ոսկանյանը, կուսակցական, սովետական ղեկավար այլ աշխատողներ։

ՀՍՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոկտեմբերի 12-ին ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ Հանրապետության գյուղատնտեսության մինիստրության մասնակցությամբ։ Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Մեր կուսակցության XXVI համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումի որոշումներում, ասաց նա, հատկապես ընդգծվում է գիտության դերը պարենային ծրագրի իրականացման գործում։ Գիտաշխատողները պետք է գիտակցեն այդ պրոբլեմի ամբողջ կարևորությունը, որը պահանջում է կոմպլեքսային մոտեցում, մասնագետների համատեղ ջանքեր։ Գիտական որոնման ստրատեգիան, մեր աշխատանքի գլխավոր ուղղություններ նախատեսում են ամենից առաջ գյուղատնտեսության բնագավառում հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացում։ Անհրաժեշտ է պրակտիկայի ընդհանրացման հիման վրա մշակել արտադրության մասնագիտացման, համակենտրոնացման ու միջտնտեսային կոոպերացման հետագա կատարելագործման, աշխատանքի կազմակերպման նոր, առաջադիմական ձևերի արմատավորման և գրախթանման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ։

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը, ընդգծեց Վ. Հ. Համբարձումյանը, գիտության աշխատողներին պարտավորեցրեց բարձրացնել գիտական հետազոտությունների արդյունավետությունը կենսաբանական, գյուղատնտեսական, քիմիական, ֆիզիկա-տեխնիկական, տնտեսական և այլ գիտությունների նոր նվաճումների հիման վրա, պարենային ծրագրի իրականացումն ապահովելու համար մշակել արդյունավետ մեթոդներ և առաջարկություններ։

ՍՍՀՄ պարենային ծրագրի իրականացման գործում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վ. Հ. Ղաղարյանը։ «Հանրապետության գյուղատնտեսական գիտությունը և ՍՍՀՄ պարենային ծրագրի իրականացումը» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր Մ. Ս. Մելքոնյանը։

Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողները նշեցին, որ պարենային ծրագիրը էապես տարբերվում է տնտեսական ու սոցիա-

լական զարգացման սովորական պլաններից։ Այդ նպատակային և կոմպլեքսային ծրագիրը նախատեսում է տնտեսական, սոցիալական, կազմակերպական և գիտատեխնիկական հարցերի լուծում։ Ծրագիրը ոչ թե պարզապես խնդիրներ է առաջադրում, այլև միաժամանակ նշում է դրանց լուծման ուղիներն ու մեթոդները։

Ժողովում կոնկրետ առաջարկություններ արվեցին գիտական հետազոտությունների ինտենսիվացման, գյուղատնտեսության բոլոր բնագավառներում դրանց արդյունքների արմատավորման արագացման վերաբերյալ։

Ընդհանուր ժողովն ընդունեց որոշում, որտեղ իրենց արտացոլումը գտան պարենային ծրագրի իրականացման ուղղությամբ հանրապետության գիտական հիմնարկների առջև կանգնած կոնկրետ խնդիրները։ Ժողովի աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Վ. Բ. Ղալումյանը, կուսակցական, սովետական ղեկավար այլ աշխատողներ։

Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

1988 թ. սեպտեմբերի 21—25-ը Երևանում տեղի ունեցավ միջազգային հայերենագիտական գիտաժողով, որին մասնակցեցին Սովետական Միության տարբեր քաղաքներից և արտասահմանյան 10 երկրներից հրավիրված հայագետներ։ Գիտաժողովն աչքի ընկավ մասնակիցների լայն ներկայացուցչությամբ և հարուստ ու բազմակողմանի ծրագրով։ Լիագումար (պլենար) և մասնաճյուղային նիստերում լսվեցին 89 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին հայերենագիտության ամենաբազմազան բնագավառների և արտացոլում էին հայոց լեզվի ուսումնասիրության արդի մակարդակը։ Գիտաժողովի աշխատանքներն ընթացան երեք մասնաճյուղերով՝ հայերենի համեմատական քերականության, հայոց լեզվի պատմության և ժամանակակից հայոց լեզվի։ Պետք է, սակայն, նշել, որ այս բաժանումը որոշ չափով պայմանական էր, քանի որ յուրաքանչյուր մասնաճյուղի թեմատիկ ընդգրկումը շատ ավելի լայն էր։

Հայերենի համեմատական քերականության մասնաճյուղում կարդացված զեկուցումները նվիրված էին հայոց լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակների համեմատական քննությանը՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության։ Համեմատաբար լայնորեն քննարկվեցին հայերենի համեմատական հնչյունաբանության և ձևաբանության հարցերը, եթե մանավանդ նկատի առնենք, որ լիագումար նիստերում կարդացված զեկուցումների մեծ մասը (Գ. Ջահուկյան, Ջ. Գրեպին, Թ. Գամկրելիձե, Ջ. Բոլոնեզի, Վ. Վինտեր, Է. Հեմփ, Կ. Հ. Շմիդտ) նույնպես վերաբերում էր նշված բնագավառներին։ Համեմատական լեզվաբանության և հատկապես հնդեվրոպաբանության վերջին տասնամյակների լուրջ նվաճումները հնարավորություն տվեցին ոչ միայն նորովի մեկնաբանել ու գնահատել հայերենի ընձեռած նյութը, այլև դրա հիման վրա արժեքավոր հշգրտումներ մտցնել հ.-ե. նախալեզվի վերականգնվող կազապարի որոշ կողմերի մեջ։ Այդ տեսակետից ուշագրավ էր Թ. Գամկրելիձեի (Թբիլիսի) «Հնդեվրոպական ակաուկայինների տեսությունը» և դրաբարի բաղաձայնական համակարգը» զեկուցումը, որտեղ հեղինակը հ.-ե. պայթականների դասական տեսության տիպաբանական վերամեկնաբանման հիման վրա առաջ բաշեց հին հայերենի պայթական բաղաձայնների համակարգի բացառիկ հնասիպության դրությունը, պնդելով, որ պայթականների հ.-ե. նախնական համակարգը հայերենում նշանակալից փոխակերպումներ չի կրել։ Օ. Ս. Շիրոկովը (Մոսկվա) նույնպես հաստատում է բաղաձայնական շարքերի հայկական համակարգի հնատիպությունը։ Համահնդեվրոպական և հայկական բաղաձայնական համակարգերի հարաբերակցության քննության ժամանակ կիրառելով տիպաբանական տվյալներ, նա հայերենի ընձեռած նյութի հիման վրա վերականգնում է հ.-ե. երկբաղաձայն վանկաձևությունների վեց տիպ, որոնց տարբեր տոների առանձնահատկություններից կարելի է պարզել հնչյունական անցումների տիպերը։

Դասական հայերենի շնչեղ խուլ բաղաձայների ծագմանն էր նվիրված Ջ. Գրեպլեի (ԱՄՆ) զեկուցումը։ Քննելով շնչեղ խուլ բաղաձայներ պարունակող հայերեն արմատների մի խումբ, հեղինակը գտնում է, որ հայերենի նյութը սերտ մերձավորություն ունի ասանսկրիտի և հունարենի տվյալների հետ և հնարավորություն է տալիս հայերենի շնչեղ խուլերի ծագման խնդիրը լուծել կոկորդայինների տեսության միջոցով։

Հայերենի համեմատական հնչյունաբանության և ստուգաբանության հարցերին նվիրված զեկուցումներից ուշագրավ էր լիագումար նիս-